Քաղաքներում և գիւղաքաղաքներում բնակուող բնակչաց թիւը կազմում է 22,07% տոկոսը ամբողջ Բագուայ նահանգի ժողովրդին։ Համեմատելով այս թիւը անցեալ տարուայ տեղեկութիւնների հետ՝ երեւում է թէ աւելացած է 11,743 մարդ, այսինքն թէ 1,5%։ Արական սեռը աճել է մինչեւ 8,778 կամ 2,1%, բայց իգական սեռի թիւը բաւականին նուազ է, այսինքն 2,965 կամ թէ 0,8%։

Սեռի հաշւով Բագուայ նահանգը պատկանում է այն նահանգներին, ուր արական տարրը գերազանցում է իգականից։ 100 երկսեռ բնակչաց վրայ գալիս է

| | | | | |
|---|---|---|---|---|
| Նահանգում | 55,2 | արական | 44,8 | իգական |
| Քաղաքներում | 57,2 | » | 42,8 | » |
| Գաւառներում | 54,6 | » | 45,4 | » |

---

Նահանգի բնակիչքը դաւանութեամբ այսպէս են դասաւորուած՝

| | արական | իգական | երկսեռ |
|---|---|---|---|
| Ուղղափառք | 24,919 | 14,574 | 39,493 |
| Աղանդաւորք | 11,371 | 9,979 | 21,350 |
| Հայ Լուսաւորչականք | 36,108 | 26,432 | 62,540 |
| Կաթոլիկք | 1,503 | 575 | 2,078 |
| Բողոքականք | 1,674 | 1,337 | 3,011 |
| Հրէայք | 5,320 | 5,051 | 10,371 |
| Մահմետականք շիա | 214,992 | 172,910 | 387,902 |
| ,, սուննի | 133,372 | 117,439 | 250,811 |
| | 429,259 | 348,297 | 777,556 |

Այսպէս թուանշանի գերազանցութիւնը գտնվում է Շիեա մահմետականի կողմում, որոնք կազմում են գրեթէ ամբողջ ժողովուրդի կէսը (49,90)%, միւս դաւանութիւնները դասաւորուած են պակասած կարգով այսպէս.

| | |
|---|---|
| Մահմետական սուննի | 32,26% |
| Հայ Լուսաւորչականք | 8,04% |
| Ուղղափառք | 5,03% |
| Աղանդաւորք | 2,74% |